

Գ Ի Ր Ք Լ Ի



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԵՔՏՐՈՂԱԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ. ՊՈԼԻՑ, 7.

1909

Ե Ր Գ Չ Ի Ն

Դո՛ւ, անհոգ երգիչ, երկնքի զաւակ,
 Ու սէգ պառնասից քո դիտիչ նուագ
 Հնչում ես ուրախ, հնչում խանդավառ,
 Երգում սէր, հրնուանք ու կոյս լուսափառ,
 Երբ զահիդ վերայ հպարտ ու անեղ
 Աւբայի նման բազմած փառահեղ,
 Թունոտ հեզնանով նայում ես դու վար,
 Ասեղով ամբոխ՝ վայրենի, խաւար,
 Ու տեսնում ինչպէս մարդկանց ձեռքերով
 Ներկում է գետին խեղճի արիւնով,
 Կամ հեմարտութիւն ոտնակոխ արած՝
 Կեղծիքը դարձել պաշտելի Աստուած,—
 Ասա՛ ինձ, երգի՛չ, էլ ինչո՛ւ համար
 Հնչում ես այդպէս եօթնադի քնար,
 Ինչո՛ւ ես անհոգ սէր, հրնուանք երգում,
 Երբ պէտք է կորչի երգդ եթերում...
 Արի՛ թող, երգի՛չ, քո անհաս բարձունք,
 Ճաշակիր տանջանք, արիւն ու արցունք.
 Երգի՛ր ամբոխի վիշտը դարաւոր,
 Նրա տառապանք, չարիք բիրաւոր,
 Թո՛ղ մուսաներին ու ընկեր դարձիր
 Անմեղ գոհերին. նոցա հետ լացի՛ր,
 Նոցա հետ զնա՛ փոշոտ հանապարհ—
 Դէպ ազատութիւն—վսե՛մ գաղափար...
 Եւ այն ժամանակ երգդ կըլինի
 Սրբազան ներքող անմեղ արիւնի,
 Նա ոգի կըսայ յուսահատութիւն
 Ու վերջ կը դնի թուառի լացին...